-ժամկետային ավանդներ	-	-
-վարկեր	2,608,222	2,494,576
-ռեպո(հետգնման) պայմանագրեր	-	-
-այլ	76	76
-հաշվեգրված տոկոսներ	55,276	102,430
<b>Ընդամենը</b>	<b>2,867,339</b>	<b>3,019,214</b>
<b>ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>		
-ընթացիկ հաշիվներ	18,228,137	22,579,597
-ժամկետային ավանդներ	292,272	189,930
-ռեպո(հետգնման) պայմանագրեր	-	-
-այլ	381,601	135,991
-հաշվեգրված տոկոսներ	7,827	3,497

<b>Ընդամենը</b>	<b>18,909,837</b>	<b>22,909,015</b>
<b>Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ</b>		
- ընթացիկ հաշիվներ	334,567	103,146
- ժամկետային ավանդներ	-	-
- ռեպո(հետգնման) պայմանագրեր	-	-
- այլ	-	55
- հաշվեգրված տոկոսներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>334,567</b>	<b>103,201</b>
<b>ՀՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ</b>		
- ընթացիկ հաշիվներ	233,996	179,711
- ժամկետային ավանդներ	-	2,320
- ռեպո(հետգնման) պայմանագրեր	-	-
- այլ	11,511	8,590
- հաշվեգրված տոկոսներ	-	138
<b>Ընդամենը</b>	<b>245,507</b>	<b>190,759</b>
<b>ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>		
- ընթացիկ հաշիվներ	8,475,318	11,388,329
- ժամկետային ավանդներ	18,007,203	18,303,506
- ռեպո(հետգնման) պայմանագրեր	-	-
- այլ	25,824	51,176
- հաշվեգրված տոկոսներ	187,133	194,075
<b>Ընդամենը</b>	<b>26,695,478</b>	<b>29,937,086</b>
<b>Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ</b>		
- ընթացիկ հաշիվներ	295,596	394,269
- ժամկետային ավանդներ	1,622,980	954,509
- այլ	48,477	49,426
- հաշվեգրված տոկոսներ	13,465	9,296
<b>Ընդամենը</b>	<b>1,980,518</b>	<b>1,407,500</b>
<b>Ընդամենը պարտավորություններ հաճախորդներին նկատմամբ</b>	<b>51,033,246</b>	<b>57,566,775</b>

30.09.16թ. դրությամբ վարկերի ապահովման միջոց հանդիսացել են 1 546 895 հազ. ՀՀ դրամին համարժեք միջոցներ:

31.12.15թ. դրությամբ վարկերի ապահովման միջոց հանդիսացել են 998 250 հազ. ՀՀ դրամին համարժեք միջոցներ և որպես տրամադրված երաշխավորությունների ապահովման միջոց՝ 16 791 հազ. ՀՀ դրամի համարժեք միջոցներ:

**Բանկի ավանդատուների թվաքանակը**

	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ	13	10
Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ	1	-
ՀՀ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ	-	1
Ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ	-	-
ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	2,495	2,457
Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	52	43
<b>Ընդամենը</b>	<b>2,561</b>	<b>2,511</b>

**Ծանոթագրություն 24**

**Բանկի կողմից թողարկված արժեթղթեր**

	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ	-	-

Բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր	-	-
Բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր	3,246,760	3,302,500
Բանկի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսեր	-	-
Թողարկված այլ արժեթղթեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	19,193	20,981
<b>Ընդամենը</b>	<b>3,265,953</b>	<b>3,323,481</b>

22.07.16թ. Բանկի կողմից թողարկվել է 24 ամիս ժամկետայնությամբ 13 % եկամտաբերությամբ 400 000 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով 40 000 հատ սովորական պարտատոմս:

17.06.16թ. Բանկի կողմից թողարկվել է 48 ամիս ժամկետայնությամբ 7 % եկամտաբերությամբ 1 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40 000 հատ սովորական պարտատոմս:

01.12.15թ. Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 7 % եկամտաբերությամբ 2 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80 000 հատ սովորական պարտատոմս:

26.06.15թ. Բանկի կողմից թողարկվել է 36 ամիս ժամկետայնությամբ 7.25 % եկամտաբերությամբ 2 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 80 000 հատ սովորական պարտատոմս:

11.06.14թ. Բանկի կողմից թողարկվել է 48 ամիս ժամկետայնությամբ 8 % եկամտաբերությամբ 1 000 000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով 40 000 հատ սովորական պարտատոմս:

#### Ծանոթագրություն 25

##### Առևտրային նպատակով պահվող պարտավորություն

	30.09.2016	31.12.2015
-ֆյուչերս	-	-
-ֆորվարդ	-	-
-օպցիոն	-	-
-սվոպ	-	-
-այլ	-	-
Հեջավորման ածանցյալ գործիքներ	-	-
Այլ	-	-
<b>Ընդամենը</b>	-	-

##### Ծանոթագրություն 26 Վճարվելիք գումարներ

	30.09.2016	31.12.2015
Շահաբաժիններ	175	177
Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով	-	-
Ավանդների ապահովագրության գծով	15,019	13,681
<b>Ընդամենը</b>	<b>15,194</b>	<b>13,858</b>

#### Ծանոթագրություն

##### Հետաձգված հարկային պարտավորություն

Հետաձգված հարկային պարտավորություն	30.09.2016	31.12.2015
Հետաձգված հարկային պարտավորություն	-	35,518
Հետաձգված հարկային ակտիվ	-	158,354
<b>Ընդամենը</b>	-	<b>(122,836)</b>

##### Ընթացիկ հարկի գծով պարտավորություն

Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	30.09.2016	31.12.2015
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	27,308	303,604
Կանխավճարներ շահութահարկի գծով	126,687	525,675
<b>Ընդամենը</b>	<b>(99,379)</b>	<b>(222,071)</b>

**Ծանոթագրություն 27**  
**Այլ պարտավորություններ**

	30.09.2016	31.12.2015
Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով	118	120
Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով	16,132	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով		
-շահութահարկի գծով	27,308	-
-ԱԱՀ-ի գծով	2,149	5,641
-այլ հարկերի ու տուրքերի գծով	66,662	76,773
-սոցիալական ապահովագրության վճարումների գծով	5,344	6,431
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով	495,568	434,800
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	136,563	84,057
Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համալրման գծով	8,500,016	-
Այլ պարտավորություններ	126,886	49,192
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջում</b>	<b>9,376,746</b>	<b>657,014</b>

**Ծանոթագրություն 28**  
**Կանոնադրական կապիտալ**

	30.09.2016	31.12.2015
Սովորական բաժնետոմսեր	6,387,505	6,387,505
Բաժնետոմսերի քանակը	1,277,501	1,277,501
Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը	5000 դրամ	5000 դրամ
Արտոնյալ բաժնետոմսեր	-	-
Բաժնետոմսերի քանակը	-	-
Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը	-	-
Բաժնեմասեր, փայեր	-	-
Բանկի կողմից ետ գնված բաժնետոմսերի գնման գումարը	-	-
Ետ գնված բաժնետոմսերի քանակը	-	-
<b>Ընդամենը</b>	<b>6,387,505</b>	<b>6,387,505</b>

Բանկի կողմից արտոնյալ բաժնետոմսեր չեն թողարկվել, և սեփական բաժնետոմսերի ետգնում չի կատարվել:

30.09.2016թ.

Նշանակալից մասնակցի անունը/անվանումը	Բանկում ունեցած մասնակցության գումարը	Բանկում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ	Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար)
«Ֆլեշ» ՍՊԸ	4,103,050	64.24%	վառելիքի ներմուծում, մեծածախ և մանրածախ առևտուր
Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ	1,596,880	25.00%	միջազգային ֆինանսական գործունեություն
Ռուռալ Իմպուլս Զիննադրամ II Ս.Ա. ՍԻԿԱՎ-ՍԻՖ	638,755	10.00%	միջազգային ֆինանսական գործունեություն

31.12.2015թ.

Նշանակալից մասնակցի անունը/անվանումը	Բանկում ունեցած մասնակցության գումարը	Բանկում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ	Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար)
«Ֆլեշ» ՍՊԸ	4,103,050	64.24%	վառելիքի ներմուծում, մեծածախ և մանրածախ առևտուր
Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկ	1,596,880	25.00%	միջազգային ֆինանսական գործունեություն
Ռուռալ Իմպուլս Զիննադրամ II Ս.Ա. ՍԻԿԱՎ-ՍԻՖ	638,755	10.00%	միջազգային ֆինանսական գործունեություն

Կանոնադրական կապիտալի ավելացում (դրամական միջոցներով)	30.09.2016	31.12.2015
Սովորական բաժնետոմսեր	-	-
Բաժնետոմսերի քանակը	-	-
Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը	5000 դրամ	5000 դրամ

2015թ. և 2016թ. երրորդ եռամսյակում կանոնադրական կապիտալի նվազում հետ զնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի հաշվին չի կատարվել:

**Ծանոթագրություն 29 Սեփական կապիտալի այլ տարրեր**

	30.09.2016	31.12.2015
Էմիսիոն եկամուտ	1,947,880	1,947,880
<b>Ընդամենը</b>	<b>1,947,880</b>	<b>1,947,880</b>

**Ծանոթագրություն 30 Պահուստներ, պայմանական դեպքեր և պոտենցիալ այլ պարտավորություններ**

Պահուստներ	30.09.2016	31.12.2015
-գլխավոր պահուստ	2,700,000	1,500,000
-վերագնահատման պահուստներ	-	-
-այլ պահուստներ	685,974	(202,918)
<b>Ընդամենը</b>	<b>3,385,974</b>	<b>1,297,082</b>

**Ծանոթագրություն 30.1.Բանկի իրավական պարտավորությունները**

30.09.2016թ. դրությամբ Բանկը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չի առաջացել:

**Ծանոթագրություն 30.2 Բանկի հարկային պարտավորությունները**

30.09.2016թ.դրությամբ Բանկն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չի առաջացել:

**Ծանոթագրություն 30.3 Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ**

	30.09.2016	31.12.2015
Չօգտագործված վարկային գծեր	7,394,773	5,570,930
Տրամադրված երաշխիքներ	85,996	212,515
Տրամադրված ակրեդիտիվներ	16,132	-
<b>Ընդամենը</b>	<b>7,496,901</b>	<b>5,783,445</b>

**Ծանոթագրություն 30.4 Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով**

	30.09.2016		31.12.2015	
	Արտարժույթին համարժեք դրամով վճարման ենթակա գումարներ	ՀՀ դրամով վճարման ենթակա գումարներ	Արտարժույթին համարժեք դրամով վճարման ենթակա գումարներ	ՀՀ դրամով վճարման ենթակա գումարներ
<i>Մինչև 1 տարի</i>	-	375,883	-	343,988
<i>1-5 տարի</i>	-	1,089,965	-	993,038
<i>5 տարուց ավել</i>	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	-	<b>1,465,848</b>	-	<b>1,337,026</b>



### Ծանոթագրություն Զբաղիված շահույթ (վնաս)

Զբաղիված շահույթ	30.09.2016	31.12.2015
-ընթացիկ տարվա	732,828	941,681
-նախորդ տարվա	11,639,114	11,897,433
<b>Ընդամենը</b>	<b>12,371,942</b>	<b>12,839,114</b>

### Ծանոթագրություն 31

#### Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բանկի հետ կապված անձինք են համարվում բանկի ղեկավարները, բանկի բաժնետերերը և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ նրանց հետ կապված անձինք:

Բանկի հետ կապված անձանց հետ գործարքներն իրականացվել են՝ ելնելով գործող պայմաններից և տոկոսադրույքներից:

#### Պահանջներ այլ բանկերի նկատմամբ

Բանկի հետ կապակցված անձինք 31.12.15թ. և 30.09.16թ. դրությամբ այլ բանկերի նկատմամբ պահանջներ չեն ունեցել:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	30.09.2016				31.12.2015			
	բանկի բաժնետերեր և փոխկապակցված անձինք	բանկի խորհրդի անդամներ և փոխկապակցված անձինք	բանկի ղեկավարներ և փոխկապակցված անձինք	ԸՆԴԱՄԵՆԸ	բանկի բաժնետերեր և փոխկապակցված անձինք	բանկի խորհրդի անդամներ և փոխկապակցված անձինք	բանկի ղեկավարներ և փոխկապակցված անձինք	ԸՆԴԱՄԵՆԸ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	2	398,071	32,911	430,984	-	134,655	26,477	161,132
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր և փոխատվություններ	73	609,519	290,203	899,795	130	1,343,321	1,539,502	2,882,954
Տարվա ընթացքում մարված վարկեր և փոխատվություններ	75	697,272	276,883	974,230	128	1,079,905	1,533,069	2,613,102
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ(համախառն)</b>	-	<b>310,318</b>	<b>46,231</b>	<b>356,549</b>	2	<b>398,071</b>	<b>32,911</b>	<b>430,984</b>
Արժեզրկումից պահուստ	-	3,982	649	4,631	-	4,513	593	5,106
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	-	<b>306,336</b>	<b>45,582</b>	<b>351,918</b>	2	<b>393,558</b>	<b>32,318</b>	<b>425,878</b>
Տոկոսային եկամուտ	-	40,139	3,881	44,020	-	35,372	6,881	42,253
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30.09.2016				31.12.2015			
	բանկի բաժնետերեր և փոխկապակցված անձինք	բանկի խորհրդի անդամներ և փոխկապակցված անձինք	բանկի ղեկավարներ և փոխկապակցված անձինք	ԸՆԴԱՄԵՆԸ	բանկի բաժնետերեր և փոխկապակցված անձինք	բանկի խորհրդի անդամներ և փոխկապակցված անձինք	բանկի ղեկավարներ և փոխկապակցված անձինք	ԸՆԴԱՄԵՆԸ
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	9,487,669	5,685,146	637,198	15,810,013	6,410,824	5,674,815	1,449,815	13,535,454
Տարվար ընթացքում ստացված գումարներ	90,849,894	25,368,929	2,275,422	118,494,244	145,041,648	22,988,105	6,251,166	174,280,919
Տարվա ընթացքում վճարված գումարներ	98,202,089	27,966,057	2,472,422	128,640,568	141,964,803	22,977,774	7,063,783	172,006,360
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	<b>2,135,474</b>	<b>3,088,018</b>	<b>440,198</b>	<b>5,663,690</b>	<b>9,487,669</b>	<b>5,685,146</b>	<b>637,198</b>	<b>15,810,013</b>
Տոկոսային ծախս	104,047	135,246	18,139	257,431	47,961	194,210	106,702	348,873

<b>Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ</b>	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	-	-
Տարվար ընթացքում ստացված գումարներ	-	-
Տարվա ընթացքում վճարված գումարներ	-	-
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	-	-
Տոկոսային եկամուտ	-	-
<b>Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</b>	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
Մնացորդը ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	<b>2,081,326</b>	<b>4,342,988</b>
Տարվա ընթացքում ստացված գումարներ	365,019	882,998
Տարվա ընթացքում վճարված գումարներ	1,149,633	3,144,660
<b>Մնացորդը ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	<b>1,296,712</b>	<b>2,081,326</b>
Տոկոսային ծախս	140,944	361,224

<b>Բանկի ղեկավարությանը վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ նախորդ տասներկու ամիսների համար</b>	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
Բանկի խորհրդին		
- աշխատավարձ	11,282	12,552
- պարզևատրում	-	-
-սոց. հատկացումներ	-	-
Բանկի գործադիր մարմնին	-	-
- աշխատավարձ	248,509	244,698
- պարզևատրում	2,525	2,525
-սոց. հատկացումներ	-	-
<b>Ընդամենը</b>	<b>262,316</b>	<b>259,775</b>

**Ծանոթագրություն 32 Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ**

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

### Բանկի Խորհուրդը

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

### Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

### Ռիսկերի կոմիտե

Ռիսկերի կոմիտեն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման կարևոր խնդիրների համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

### Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է գործընթացների ներդրման և իրականացման համար, որոնք կապված են ռիսկերի կառավարման հետ, որպեսզի ապահովեն կառավարման անկախ գործընթացը:

### Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար: Յուրաքանչյուր բիզնես ստորաբաժանման կազմի մեջ մտնում է ապակենտրոնացված բաժին, որը պատասխանատու է ռիսկերի անկախ վերահսկման համար, այդ թվում սահմանված սահմանաչափերի համեմատ ռիսկի ենթարկվածության չափերի վերահսկումը, ինչպես նաև նոր արտադրանքների և համակարգված գործընթացների ռիսկի գնահատումը: Տվյալ բաժինը նաև ապահովում է ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգում ամբողջական տեղեկատվության հավաքը:

### Բանկի ֆինանսական ստորաբաժանում

Բանկի ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատու է Բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման, ինչպես նաև ողջ ֆինանսական համակարգի համար: Ֆինանսական ստորաբաժանումը պատասխանատվություն է կրում նաև Բանկի իրացվելիության ռիսկի և ֆինանսավորման ռիսկի համար:

### Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

### Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի անենաչափ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում

առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է Տնօրինությանը, ռիսկերի կոմիտեին և բոլոր բաժինների ղեկավարներին: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, արժեքը ներառյալ ռիսկը (VaR), իրացվելիության ցուցանիշների և ռիսկի աստիճանի փոփոխության վերաբերյալ: Յուրաքանչյուր ամիս տրամադրվում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն ըստ բնագավառների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների: Եռամսյակային կտրվածքով ավագ ղեկավարող անձնակազմը որոշում է պահուստի ստեղծման անհրաժեշտությունը վարկային կորուստների համար: Տնօրինությունը եռամսյակային կտրվածքով ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար:

Բանկի բոլոր մակարդակների համար կազմվում են ռիսկերի վերաբերյալ տարբեր հաշվետվություններ, որոնք տարածվում են, որպեսզի Բանկի բոլոր բաժիններին ապահովեն հասանելիություն ընդհանուր, անհրաժեշտ և ժամանակին համապատասխան տեղեկատվությանը:

Յուրաքանչյուր օր անց է կացվում կարճատև խորհրդակցություն ղեկավարության և Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է արժեքը ներառյալ ռիսկը VaR, ներդրումները, իրացվելիությունը, ինչպես նաև ռիսկի մակարդակում փոփոխությունները:

#### Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ դիրքերի կառավարման համար, որոնք առաջանում են տոկոսադրույքների, տարադրամների, ակցիաների արժեքի փոփոխության ռիսկի, վարկային ռիսկի ինչպես նաև ըստ նախատեսված գործարքների դիրքերի փոփոխությունների հետևանքով:

Բանկն ակտիվ կիրառում է ապահովումը, իր պարտքային ռիսկի նվազեցման համար (հավելյալ տեղեկությունը տե՛ս ստորև):

#### Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

## **Ծանոթագրություն 32.1 Վարկային ռիսկ**

### **Վարկերի ապահովվածությունը**

Վարկային պորտֆելի ապահովվածությունը հանդիսացող գրավները ըստ տեսակի տարբերակում ենք՝ անշարժ գույքի գրավ, շարժական գույքի գրավ և շրջանառության մեջ գտնվող ապրանքային մնացորդի գրավ:

Որպես անշարժ գույքի գրավ կարող են հանդիսանալ ՀՀ տարածքում առավել իրացվելի գոտիներում առկա բնակարանները, բնակելի տները, հասարակական նշանակության շինությունները, արտադրական նշանակության շինությունները և հողատարածքները: Հիփոթեքային վարկավորման դեպքում բնակարանները և բնակելի տները (այգետնակները) ապահովագրվում են:

Որպես շարժական գույքի գրավ կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, սարքավորումները, շինարարական տեխնիկան, հոսքագծերը, որոք ունեն շուկայում առավել իրացվելի արժեք:

Ավտոտրանսպորտային միջոցների գրավադրման դեպքում գրավը ապահովագրվում է վարկի մնացորդի չափով:

Որպես ապրանքային մնացորդի և շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ կարող են հանդիսանալ առավել իրացվելի ապրանքատեսակները, պատրաստի ապրանքները, որոնք չունեն պիտանելիության սեղմ ժամկետներ և շուկայում սպառողների շրջանում ունեն մեծ պահանջարկ:

Որպես գրավ ընդունելի անշարժ գույքի որակական բնութագրիչներ կարող են հանդիսանալ վթարայնության կարգավիճակը, շինության արտաքին և ֆիզիկական մաշվածության ցուցանիշները, շինության կառուցման տարեթիվը և կոնստրուկցիան: Շարժական գույքի դեպքում հաշվի է առնվում գույքի ֆիզիկական վիճակը, թողարկման տարեթիվը, գույքի տեխնիկական հագեցվածությունը և մաշվածությունը: Ապրանքների որակական հատկանիշները որոշելիս հաշվի է առնվում արտադրող ֆիրմայի վարկանիշը և տվյալ ապրանքի պատրաստման ժամանակ օգտագործված նյութերի որակը, շրջանառու միջոցների վրա ունեցած ազդեցության գործոնը:

Գրավի շուկայական արժեքը ազատ մրցակցության պայմաններում նմանատիպ և նույն պարամետրերով վաճառված գույքի համեմատության ժամանակ ստացված արժեքն է: Լիկվիդացիոն արժեքը շուկայում առավել սեղմ ժամկետներում գրավի արագ իրացման արժեքն է, որը ներկայացնում է առանց շուկայական ռիսկերի գրավի իրացումը: Վարկի տրամադրման ժամանակ որպես վարկի գումարի հաշվարկի հիմք է ընդունվում գրավի գնահատված լիկվիդացիոն արժեքը, ինչով բանկը սահմանափակում է վարկի ժամկետի ընթացքում գրավի արժեքի նվազման ռիսկը: Նշված ռիսկը նվազեցվում է նաև այն հանգամանքով, որ անշարժ և շարժական գույքերի գրավով ապահովված վարկերի դեպքում վարկ/գրավի գնահատված արժեքը հարաբերակցությունը չի գերազանցում 80%-ը:

Վարկեր տրամադրելիս բանկը մեծ կարևորություն է տալիս վարկառուի նախկինում ունեցած վարկերի սպասարկման պատմությանը, կայուն եկամուտների առկայությանը, մասնագիտական պատրաստվածությանը, քանզի նպատակ ունենալով ձևավորել որակապես կայուն վարկային պորտֆել, վարկերը հնարավորինս բարձր իրացվելի գրավով ապահովված լինելու փաստից բացի, առաջնային նշանակություն ունի վարկառուի պարտաճանաչությունը և վճարունակությունը վարկի սպասարկման առումով, ինչի հետևանքն է 2016թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ չափատող վարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 3.88% (2 621 889 հազ.դրամ): Միաժամանակ նշենք, որ 30.09.16թ. դրությամբ վարկային ներդրումները կազմել են 67 686 060 հազ. դրամ՝ 31.12.15թ.-ի 67 709 620 հազ. դրամի փոխարեն, այսինքն՝ վարկային ներդրումներն նվազել են 0.03%-ով:

### **Պահուստավորումների համապատասխանությունը**

Վարկերի դիմաց պահուստավորումները կատարվում են ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ի համաձայն:

### **Ռեպո և սվոպ գործարքները**

2016թ. երրորդ եռամսյակի ընթացքում կնքված ռեպո գործարքների ծավալը կազմել է 45 565 939 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 51 119 293 հազ. դրամի դիմաց՝ նվազելով 10.86%-ով: Տրամադրված սվոպ գործարքների ծավալը 2016թ. երրորդ եռամսյակում կազմում է 4 466 101 հազ. դրամ՝ նախորդ եռամսյակի 5 168 064 հազ. դրամի դիմաց՝ նվազելով 13.58%-ով:

Աշխատակազմը

Բանկի կողմից որակապես կայուն վարկային պերսֆեկի ձևավորումը արդյունք է նաև համապատասխան բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների, ներդրված աշխատանքային էթիկայի և թիմային աշխատելաճի ունակության:

Վերահսկողություն (մոնիտորինգ) և վարկային ռիսկերի հայտնաբերում

Վարկերի սպասարկման բարձր որակը և ժամկետանց վարկերի բացակայությունը արդյունք է նաև վարկերի սպասարկման ընթացքում մշտական վերահսկողության, վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում վարկառուների հետ հարաբերությունների և մշտական կապի պահպանման, ինչի արդյունքում բանկը մշտապես տեղյակ է վարկառուի ֆինանսական վիճակից և անհրաժեշտության դեպքում արագ արձագանքում է իրավիճակի փոփոխություններին՝ ցուցաբերելով անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն իրավիճակի կայունացման համար: Նշված միջոցառումները խիստ նպաստում են ժամանակին վարկային ռիսկերը բացահայտելուն և դրանք նվազեցնելուն կամ իսպառ վնասագերծելուն: Վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում մշտական հսկողություն է իրականացվում նաև վարկի նպատակային օգտագործման, վարկի ապահովման միջոցի՝ գրավի նկատմամբ, ինչը կատարվում է Բանկի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից: Վարկի նպատակային օգտագործման մոնիտորինգն իրականացվում է ըստ անհրաժեշտության, վարկի օգտագործման ուղղությունների առանձնահատկությունների, վարկի կանխիկ և անկանխիկ գործարքների և այլն: Անշարժ գույքի մոնիտորինգը իրականացվում է երեք ամիսը մեկ անգամ, առանձին դեպքերում՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Շարժական գույքի մոնիտորինգը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

Եթե շուկայում տեղի է ունեցել զնահատված անշարժ գույքի գների տատանում մոտ 20%-ի չափով, ապա ելնելով Բանկի շահերից՝ Բանկը կարող է պահանջել կատարել Գրավի վերագնահատում:

Եթե գրավի արժեքը էապես էժանացել է շուկայում, ապա Բանկի պահանջով Վարկառուն առաջարկում է ապահովել լրացուցիչ Գրավով, որը, Բանկի հետ համաձայնեցնելով, գրավադրվում է հիմնական գրավի հետ միասին:

**ՀՀ տարածքում տեղաբաշխված վարկերը՝ ըստ ՀՀ մարզերի տեղաբաշխվածության**

<b>ՀՀ մարզեր</b>	<b>30.09.2016</b>	<b>31.12.2015</b>
Երևան	57,210,027	55,284,219
Գեղարքունիքի մարզ	812,789	961,899
Շիրակի մարզ	948,707	1,027,533
Լոռու մարզ	795,155	834,916
Վայոց Ձորի մարզ	2,637	3,704
Արմավիրի մարզ	2,018,308	2,598,253
Սյունիքի մարզ	373,386	747,248
Տավուշի մարզ	512,783	534,823
Արագածոտնի մարզ	323,717	415,442
Կոտայքի մարզ	1,980,356	2,014,780
Արարատի մարզ	2,146,404	2,565,699
ԼՂՀ	557,932	716,003
<b>Ընդամենը</b>	<b>67,682,201</b>	<b>67,704,519</b>

Աշխարհագրական կենտրոնացումներ  
30.09.2016

Հոդվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	29,548,433	721,659	3,483,986	3,645	33,757,723
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,714,901	845,447	594,173	29,104	6,183,625
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	66,108,471	-	3,782	-	66,112,253
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	26,889,534	-	1,342	-	26,890,876
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,557,943	9,099	1,542	166	4,568,750
<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>	<b>131,819,282</b>	<b>1,576,205</b>	<b>4,084,825</b>	<b>32,915</b>	<b>137,513,227</b>
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	7,442,338	54,563	-	-	7,496,901
<b>Պարտավորություններ</b>					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,436,784	32,752	39,835,396	343,213	49,648,145
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	48,718,161	1,355,223	306,287	653,575	51,033,246
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	3,265,953	-	-	-	3,265,953
Այլ պարտավորություններ	9,050,076	8,906	413,600	-	9,472,582
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>	<b>70,470,974</b>	<b>1,396,881</b>	<b>40,555,283</b>	<b>996,788</b>	<b>113,419,926</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>61,348,308</b>	<b>179,324</b>	<b>(36,470,458)</b>	<b>(963,873)</b>	<b>24,093,301</b>

\* Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:



31.12.2015

Հողվածի անվանումը	ՀՀ	ԱՊՀ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>					
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	29,373,680	360,503	5,511,790	6,065	35,252,038
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,915,934	647,824	4,289,978	8,049	10,861,785
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	66,078,127	242	4,758	-	66,083,127
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	14,120,046	-	1,342	-	14,121,388
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	1,023,313	-	-	-	1,023,313
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,643,467	1,138	41,062	154	4,685,821
<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>	<b>121,154,567</b>	<b>1,009,707</b>	<b>9,848,930</b>	<b>14,268</b>	<b>132,027,472</b>
Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածներ	5,690,688	92,754	3	-	5,783,445
<b>Պարտավորություններ</b>					
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,038,819	10,779,397	28,005,878	170,669	47,994,763
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	56,056,075	418,362	711,564	380,774	57,566,775
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	3,323,481	-	-	-	3,323,481
Այլ պարտավորություններ	659,129	9,081	2,662	-	670,872
<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>	<b>69,077,504</b>	<b>11,206,840</b>	<b>28,720,104</b>	<b>551,443</b>	<b>109,555,891</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>52,077,063</b>	<b>(10,197,133)</b>	<b>(18,871,174)</b>	<b>(537,175)</b>	<b>22,471,581</b>

Վարկային ռիսկ պարունակող ակտիվները ըստ սեգմենտների և ռիսկայնության

30.09.2016

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
<b>Ընդամենը վարկեր, այդ թվում՝</b>	<b>63,987,350</b>	<b>27,019</b>	<b>1,254,556</b>	<b>235</b>	<b>686,284</b>	<b>131</b>	<b>184,063</b>	<b>100</b>	<b>4,582,103</b>	<b>783</b>
1. Արդյունաբերություն	10,031,392	226	562,796	18	36,986	8	-	-	662,651	29
2. Գյուղատնտեսություն	1,586,524	1,304	14,286	6	3,747	4	1,420	3	219,114	23
3. Շինարարություն	3,651,916	67	-	-	-	-	2,217	1	161,019	4
4. Տրանսպորտ և կապ	4,799,998	70	10,213	1	90,344	3	7,496	1	6,942	1
5. Առևտուր	18,243,911	1,501	85,183	23	99,046	14	83,013	25	1,717,494	126
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	5,050,301	163	226,049	9	340,616	8	7,592	3	207,546	11
7. Ֆինանսական հատված	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	11,947,882	22,844	312,614	168	107,067	92	77,531	66	1,005,178	557
8.1 անշարժ գույքի գրավով	1,950,498	338	218,867	15	19,762	3	59,212	7	272,893	17
8.2 ավտոմեքենայի գրավով	100,798	43	1,126	1	25,483	2	913	1	19,816	3
9. Տնտեսության այլ ճյուղեր	8,675,426	844	43,415	10	8,478	2	4,794	1	602,159	32
<b>Դեբիտորական պարտքեր</b>	<b>488,082</b>	<b>22,360</b>	<b>534</b>	<b>22</b>	<b>221</b>	<b>19</b>	<b>118</b>	<b>10</b>	<b>915</b>	<b>89</b>
<b>Ինվեստիցիոն արժեթղթեր</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Հետհաշվեկշռային հոդվածներ, այդ թվում՝</b>	<b>6,009,413</b>	<b>8,003</b>	<b>568</b>	<b>19</b>	<b>356</b>	<b>12</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>-</b>	<b>-</b>
երաշխիքներ	85,136	15	-	-	-	-	-	-	-	-
ակրեդիտիվներ	15,971	1	-	-	-	-	-	-	-	-

31.12.2015

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
<b>Ընդամենը վարկեր, այդ թվում՝</b>	<b>65,056,909</b>	<b>29,406</b>	<b>379,094</b>	<b>231</b>	<b>370,655</b>	<b>118</b>	<b>276,469</b>	<b>96</b>	<b>3,061,650</b>	<b>634</b>
1. Արդյունաբերություն	4,305,100	259	-	-	61,487	12	1,506	2	541,208	21
2. Գյուղատնտեսություն	1,395,054	1,056	23,606	14	83,662	3	10,252	3	56,835	13
3. Շինարարություն	3,486,220	70	-	-	-	-	42,600	1	14,675	3
4. Տրանսպորտ և կապ	5,037,229	68	13,253	4	-	-	-	-	83,574	1
5. Առևտուր	24,968,839	1,795	189,762	46	108,887	31	52,620	19	1,157,289	95
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	5,296,145	199	31,925	4	-	-	1,953	3	162,555	7
7. Ֆինանսական հատված	-	-	-	-	-	-	-	-	-	-
8. Սպառողական վարկեր, այդ թվում՝	12,203,489	25,165	77,166	154	27,394	66	48,225	59	946,185	470
8.1 անշարժ գույքի գրավով	2,844,749	352	9,014	5	2,042	2	38,321	11	-	-
8.2 ավտոմեքենայի գրավով	249,654	61	-	-	-	-	-	-	-	-
9. Տնտեսության այլ ճյուղեր	8,364,833	794	43,382	9	89,225	6	119,313	9	99,329	24
<b>Դեբիտորական պարտքեր</b>	<b>1,122,896</b>	<b>22,087</b>	<b>247</b>	<b>12</b>	<b>194</b>	<b>8</b>	<b>52</b>	<b>7</b>	<b>200,260</b>	<b>108</b>
<b>Ինվեստիցիոն արժեթղթեր</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Հետհաշվեկշռային հոդվածներ, այդ թվում՝</b>	<b>5,685,196</b>	<b>8,351</b>	<b>533</b>	<b>24</b>	<b>174</b>	<b>10</b>	<b>60</b>	<b>6</b>	<b>-</b>	<b>-</b>
երաշխիքներ	210,390	25	-	-	-	-	-	-	-	-
ակրեդիտիվներ			-	-	-	-	-	-	-	-

Վարկային ռիսկ պարունակող ակտիվները ըստ տարածաշրջանների և ռիսկայնության

30.09.2016

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
<b>Վարկեր, այդ թվում՝</b>	<b>63,987,350</b>	<b>27,019</b>	<b>1,254,556</b>	<b>235</b>	<b>686,284</b>	<b>131</b>	<b>184,063</b>	<b>100</b>	<b>4,582,103</b>	<b>783</b>
1. ՀՀ ռեզիդենտներին	63,983,568	27,018	1,254,556	235	686,284	131	184,063	100	4,539,101	780
2. ԱՊՀ երկրների ռեզ-ին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	6,663	2
Ռուսաստանի Դաշնություն	-	-	-	-	-	-	-	-	6,663	2
3. ՏՀԶԿ երկրների ռեզ-ին (ըստ երկրների),	3,782	1	-	-	-	-	-	-	36,339	1
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	3,782	1	-	-	-	-	-	-	36,339	1
Մեծ Բրիտանիա	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>63,987,350</b>	<b>27,019</b>	<b>1,254,556</b>	<b>235</b>	<b>686,284</b>	<b>131</b>	<b>184,063</b>	<b>100</b>	<b>4,582,103</b>	<b>783</b>

31.12.2015

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ		Չաշխատող ակտիվներ							
	Ստանդարտ/Ոչ ռիսկային		Հսկվող/ Ռիսկային		Ոչ ստանդարտ/Միջին ռիսկային		Կասկածելի/ Բարձր ռիսկային		Անհուսալի	
	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ
<b>Վարկեր, այդ թվում՝</b>	<b>65,056,909</b>	<b>29,406</b>	<b>379,094</b>	<b>231</b>	<b>370,655</b>	<b>118</b>	<b>276,469</b>	<b>96</b>	<b>3,061,650</b>	<b>634</b>
1. ՀՀ ռեզիդենտներին	65,051,909	29,404	379,094	231	370,655	118	276,469	96	3,017,946	631
2. ԱՊՀ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	242	1	-	-	-	-	-	-	37,051	1
Ռուսաստանի Դաշնություն	242	1	-	-	-	-	-	-	37,051	1
3. ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների),	4,758	1	-	-	-	-	-	-	6,653	2
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	4,758	1	-	-	-	-	-	-	-	-
Կանադա	-	-	-	-	-	-	-	-	-	-
Մեծ Բրիտանիա	-	-	-	-	-	-	-	-	6,653	2
4. Ոչ ՏՀԶԿ երկրների ռեզիդենտներին (ըստ երկրների)	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վրաստան	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>65,056,909</b>	<b>29,406</b>	<b>379,094</b>	<b>231</b>	<b>370,655</b>	<b>118</b>	<b>276,469</b>	<b>96</b>	<b>3,061,650</b>	<b>634</b>

### Ծանոթագրություն 32.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

### Շուկայական ռիսկի վերլուծություն

Խորհուրդը սահմանել է ռիսկի ընդունելի սահմանաչափերը: Բանկը կիրառում է VaR (ռիսկային արժեքի) մեթոդը գնահատելու համար շուկայական ռիսկը և հնարավոր կորուստները՝ հիմնվելով մի շարք չափանիշների և շուկայի պայմանների փոփոխությունների մասին ենթադրությունների վրա: VaR-ը մեթոդ է, որն օգտագործվում է ֆինանսական ռիսկը չափելու համար՝ գնահատելով հնարավոր բացասական փոփոխությունը պորտֆելի շուկայական արժեքում որոշված վստահության մակարդակի և նշված ժամկետի համար: Բանկն օգտագործում է ամբողջական ոչ գծային VaR մոդել տոկոսադրույքների, գների տարբերությունների և տատանումների ռիսկերի համար: Այս հաշվարկները հիմնված են Մոնտե-Կառլոյի սիմուլացիաների վրա՝ ստացված փոփոխությունների/փոխազդեցությունների մատրիցայից: Արտարժույթի փոխարժեքների հետ կապված VaR-ի համար Բանկն օգտագործում է փոփոխությունների/փոխազդեցությունների մոդելը: Կապիտալի գործիքներին բնորոշ ռիսկը չափվում է օգտագործելով միագործն մոդելը:

### VaR մեթոդի նպատակները և սահմանափակումները

Բանկն օգտագործում է սիմուլացիոն մոդելներ առևտրային պորտֆելի շուկայական արժեքում փոփոխությունները գնահատելու համար, որոնք հիմնված են նախորդ հինգ տարիների պատմական տվյալների վրա: VaR մոդելները նպատակ ունեն չափել շուկայական ռիսկը նորմալ շուկայական միջավայրում: Մոդելը ենթադրում է, որ ռիսկի գործոններում յուրաքանչյուր փոփոխություն, որքազդում է նորմալ շուկայական միջավայրի վրա, ենթարկվում է նորմալ բաշխման: Բաշխումը հաշվարկվում է օգտագործելով երկրաչափական պրոգրեսիայով կշռված պատմական տվյալներ: VaR-ի օգտագործումն ունի սահմանափակումներ, որովհետև այն հիմնված է պատմական կորելիացիաների և շուկայական գների տատանումների վրա և ենթադրում է, որ ապագա գնային փոփոխությունները կենթարկվեն վիճակագրական բաշխման: Այն պատճառով, որ VaR-ը տեղեկատվության տրամադրման զգալիորեն կախված է պատմական տվյալներից և չի կարող հստակորեն կանխատեսել ռիսկի գործոններում ապագա փոփոխությունները, շուկայական մեծ փոփոխությունների հավանականությունը կարող է թերագնահատված լինել, եթե ռիսկի գործոնների փոփոխությունները չհամընկնեն նորմալ բաշխման ենթադրության հետ: VaR-ը կարող է նաև թերագնահատված կամ գերագնահատված լինել կապված ռիսկի գործոնների վերաբերյալ ենթադրությունների և նման գործոնների միջև հարաբերությունների հետ որոշ գործիքների համար: Չնայած, որ դիրքերը կարող թեև փոխվել օրվա ընթացքում, VaR-ը միայն ներկայացնում է պորտֆելների ռիսկը յուրաքանչյուր գործառնական օրվա փակման դրությամբ, և այն չի հաշվարկում այն վնասները, որոնք կարող են տեղի ունենալ 99% վստահության մակարդակից դուրս:

Գործնականում, ընթացիկ առևտրային արդյունքները կարող են տարբերվել VaR-ի հաշվարկներից և, մասնավորապես, հաշվարկը չի տրամադրում շահույթների և վնասների վերաբերյալ եական տեղեկատվություն անկայուն շուկայի պայմաններում: VaR մոդելների արժանահավատությունը որոշելու համար, ընթացիկ արդյունքները պարբերաբար վերահսկվում են VaR հաշվարկների համար օգտագործվող ենթադրությունների և չափանիշների ճշմարտացիությունը ստուգելու համար: Շուկայական ռիսկի դիրքերը նույնպես ենթարկվում են պարբերական սթրես թեստերի, համոզված լինելու համար, որ Բանկը կդիմակայի արտակարգ շուկայական իրադարձություններին:

### VaR ենթադրություններ

Բանկի չափած VaR-ը 99% վստահությամբ գնահատում է պոտենցիալ վնասը, որ չի սպասվում որ կգերազանցվի, եթե ընթացիկ շուկայական ռիսկի դիրքերը անփոփոխ մնան մեկ օրվա ընթացքում: 99% վստահության միջակայքի օգտագործումը նշանակում է, որ մեկ օրվա կտրվածքով, VaR-ի արժեքը գերազանցող վնասները պետք է լինեն միջինում ոչ հաճախ քան հարյուր օրը մեկ անգամ:

Քանի որ VaR-ը Բանկի շուկայական ռիսկի կառավարման բաղկացուցիչ մասն է, բոլոր առևտրահիմն գործառնությունների համար սահմանվել են VaR սահմանաչափեր, և ռիսկի չափերը վերանայվում են ամեն օր ղեկավարության կողմից:

## Արտարժույթային ռիսկ

Բանկը արտարժույթային ռիսկի հաշվարկն իրականացնում է ՎաՌ մեթոդաբանության համաձայն: Այդ նպատակով վերցվում են արտարժույթային փոխարժեքների համապատասխան ժամանակային շարքերը և արտարժույթային դիրքերի վերաբերյալ տվյալները: Հաշվարկվում է արտարժույթների փոխարժեքների տատանումների կոռելյացիոն մատրիցը և արտարժույթային ՎաՌ-ը (99% լստահության մակարդակի պայմաններում), որի հիման վրա հաշվարկվում է Բանկի տվյալ օրվա արտարժույթային ռիսկը:

### 30.09.16

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	15,954,187	17,080,732	722,804	33,757,723
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,030,516	3,949,041	204,068	6,183,625
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ	20,467,169	45,644,612	472	66,112,253
Վաճառքի համար մատչելի ֆինանսական արժեթղթեր	24,338,007	2,552,869	-	26,890,876
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր	-	-	-	-
Այլ ակտիվներ	4,047,067	518,831	2,852	4,568,750
